Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացած՝ 15-ը հունիսի 2022 թվական **քաղաք Գյումրի**

2022 թվականի հունիսի 15-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանի նախագահությամբ տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

ՀՀ Շիրակի մարզի խորհրդի նիստին հարգելի պատճառով չէր մասնակցում Գյումրի համայնքի ղեկավարը,

նիստին հրավիրված էին նաև.

- ՀՀ Շիրակի մարզպետարանի ղեկավար պաշտոն զբաղեցնողները,
- ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդականները և օգնականները,
- ՀՀ քաղաքաշինական, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետ Տիգրան Ղազարյանը,
- ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Արտուշ Հովհաննիսյանը,
- «ՇԻՐԱԿ» ջրօգտագործողների ընկերության տնօրեն Խաչատուր Խաչատրյանը,
- ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարների՝ քաղաքաշինության բնագավառը համակարգող տեղակալները,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչները:

Հայաստանի Հանրապետության օրհներգի կատարումից հետո, Մարզպետը ներկաներին շնորհավորեց Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների օրվա կապակցությամբ և համայնքների ղեկավարներին հորդորեց Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների գործածմանը պատշաճ ուշադրություն դարձնել: Նշվեց, որ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների գործածումն (տեղադրումը, պատշաճ տեսքի պահպանումը) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն, քանի որ երկրի զարգացման գործընթացում կարևոր է քաղաքացիների վստահությունն ու հավատը առ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, ինչը ձևավորվում է նաև այդ մարմինների կողմից իրենց լիազորությունների կատարման վարքագծից, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների պատշաճ գործածումից և պահպանումից: Այնուհետև Մարզպետը հայտարարեց, որ նիստն իրավազոր է ու ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի հետևյալ նախագիծը.

1. **Զեկույցներ.**

1) ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2022 թվականի 5 ամիսների կատարման մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

2) ՀՀ Շիրակի մարզում գյուղատնտեսական աշխատանքների և ոռոգման կազմակերպման ընթացքի մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ռոման Համայակյան

3) ՀՀ Շիրակի մարզի համայնքներում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022 թվականի սուբվենցիայի ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա թերությունների և բացթողումների, շինարարական աշխատանքների ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Խաչատուր Խնձրցյան

4) Սոցիալական բնագավառում ՀՀ Շիրակի մարզպետարանի և մարզի համայնքապետարանների համագործակցված աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող Լեյլի Ասլանյան

2. **Հաղորդումներ.**

1) ՀՀ Շիրակի մարզում գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների ընթացքի մասին:

Ներկայացնող՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի պետի ժ/պ Արտուշ Հովհաննիսյան

2) ՀՀ Շիրակի մարզի համայնքներում ՀՀ քաղաքաշինական նորմերի և կանոնների խախտմամբ իրականացված, ինչպես նաև ինքնակամ ապօրինի շինարարական աշխատանքների հայտնաբերման վերաբերյալ:

Ներկայացնող՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետ Տիգրան Ղազարյան

3. Հայտարարություններ:

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց, որից հետո անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 1. ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2022 թվականի 5 ամիսների կատարման մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

(Զեկույցը կցվում է):

Համաձայն ներկայացված զեկույցի՝ Մարզի համայնքների 2022 թվականի բյուջեներով նախատեսված 5 ամիսների սեփական եկամուտների կատարման միջին ցուցանիշը 81% է, Մարզի 6 համայնքներից 4-ի սեփական եկամուտների կատարման ցուցանիշները ցածր են Մարզի միջին ցուցանիշից: Մարզպետն ընդգծեց, որ նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից Մարզի համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաները և ավարտված սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումները կատարվել են 100%-ով, իսկ համայնքների ղեկավարները թերի են ապահովում համայնքների սեփական եկամուտների, այդ թվում՝ տարիներ շարունակ կուտակված ապառքների հավաքագրումը: Միաժամանակ, Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետը տեղեկացրեց, որ համայնքներում 500 հազար դրամ և ավելի կազմող պարտքերի ընդհանուր գումարը կազմում է 364 միլիոն դրամ (առ 01.05.2022թ.): Այս կապակցությամբ, Մարզպետը համայնքների ղեկավարներին հորդորեց ձեռնարկել գործուն միջոցներ՝ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում հարցը կարգավորել դատական կարգով կամ հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ ակնկալելով առաջիկա 15 օրերի ընթացքում բարելավված ցուցանիշներ:

ԼՍԵՑԻՆ 2. ՀՀ Շիրակի մարզում գյուղատնտեսական աշխատանքների և ոռոգման կազմակերպման ընթացքի մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ռոման Համայակյան

(Զեկույցը կցվում է):

Համաձայն ներկայացված զեկույցի՝ 2021 թվականին որոշ հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածություններ 2022 թվականին զբաղեցվել են կարտոֆիլի և բանջարեղենի ցանքով: Մարզպետի հարցին ի պատասխան Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետը հավաստիացրեց, որ հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածությունների՝ կարտոֆիլի և բանջարեղենի ցանքով զբաղեցնելու փաստը ընթացիկ տարում ոռոգման խնդիր չի առաջացնի և հնարավոր է ապահովել անխափան ոռոգում: Հաշվի առնելով Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մակեյանի առաջարկությունը և համայնքների ոռոգման համակարգում առկա զգալի կորուստների հանգամանքը, Մարզպետը հանձնարարեց Մարզպետի տեղակալ Այբերտ Այվազյանին ու Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ռոման Համայակյանին, խնդրի հստակեցման և ըստ այդմ՝ արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով, Արթիկ համայնքում բոլոր պատասխանատուների մասնակցությամբ կազմակերպել քննարկում և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն: Այս համատեքստում, կանխատեսվող կլիմայական փոփոխություններով և ջրի խնայողությամբ ու արդյունավետ օգտագործմամբ պայմանավորված, Մարզպետը կարևորեց կաթիլային ոռոգման համակարգերի ներդրումը և համայնքների ղեկավարներին առաջարկեց ձեռնարկել հնարավոր միջոցներ՝ նշված համակարգերին անցնելու ուղղությամբ: Միաժամանակ արձանագրվեց, որ «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2022 թվականին Մարզում ապահովագրվել է 1764 հա այգի և ցանքատարածություն: Չնայած այն հանգամանքին, որ ներկայացված ցուցանիշը Հանրապետությունում առաջինն է, Մարզպետը Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին հանձնարարեց գյուղատնտեսական ծրագրերի իրագեկման նպատակով շարունակել համայնքային այցերը՝ հանդիպումների կազմակերպական հարցերում ակնկալելով նաև համայնքների ղեկավարների համապատասխան աջակցությունը:

ԼՍԵՑԻՆ 3. ՀՀ Շիրակի մարզի համայնքներում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2022 թվականի սուբվենցիայի ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերում առկա թերությունների և բացթողումների, շինարարական աշխատանքների ընթացքում արձանագրված խախտումների վերաբերյալ:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Խաչատուր Խնձրցյան

(Զեկույցը կցվում է):

Մարզպետն անդրադառնալով սուբվենցիոն ծրագրերին՝ մի շարք դիտարկումներ ներկայացրեց, մասնավորապես. արձանագրված ֆինանսական խախտումների պատճառով թվով 2 ծրագրերի (նախկին Արփի համայնքում իրականացված ծրագիր, գյուղական բնակավայրերում բնակարանաշինական աշխատանքներ) վերաբերյալ գործերն ուղարկվել են ՀՀ Շիրակի մարզի դատախազություն: Շուրջ 40% ծրագրերի իրականացման համար համապատասխան մրցույթներ չեն հայտարարվել, որի պատճառով ֆինանսավորում կատարել հնարավոր չէ, մյուս կողմից էլ թերի փաստաթղթերի առկայությամբ պայմանավորված դանդաղում են (հետաձգվում են) համապատասխան ծրագրերի իրականացման գործընթացը: Մարզպետն անընդունելի համարեց Գյումրու Մուշ թաղամասի հրապարակի շինարարության և Գյումրու նոր միկրոավտոբուսների շահագործման գործընթացների ձգձգումը: Նշված խնդիրները կարգավորելու և հետագայում նմանօրինակ խախտումներն ու բացթողումները բացառելու նպատակով, Մարզպետը համայնքների ղեկավարներին առաջարկեց ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար կազմվող փաստաթղթային փաթեթների պատշաճ կազմման ուղղությամբ, միաժամանակ հորդորեց խստորեն հետևել իրականացվող աշխատանքների ընթացքին՝ խնդիրներ արձանագրվելու դեպքում օպերատիվորեն արձագանքել ու համապատասխան քայլեր ձեռնարկել: Միաժամանակ, Մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին հանձնարարեց 3-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն՝ Գյումրու Մուշ թաղամասի հրապարակի շինարարության համար նոր մրցույթ հայտարարելու և նոր միկրոավտոբուսների շահագործման ժամկետի վերաբերյալ: Բացի վերը նշվածից, Մարզպետը համայնքների ղեկավարներին առաջարկեց նաև ուշադրության կենտրոնում պահել սուբվենցիոն ծրագրերում տարբեր բնակավայրերի (հատկապես՝ փոքրերի) ընդգրկվածությունն ապահովելու հարցը:

ԼՍԵՑԻՆ 4. Սոցիալական բնագավառում ՀՀ Շիրակի մարզպետարանի և մարզի համայնքապետարանների համագործակցված աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող Լեյլի Ասլանյան

(Զեկույցը կցվում է):

Զեկույցի ավարտին Մարզպետն ընդգծեց, որ Մարզպետարան հասցեագրված սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ թվով 849 դիմումների քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 536-ով, որը նաև Մարզպետարանում ֆինանսական օգնություն տրամադրելու ուղղությամբ չափանիշներ սահմանելու հետևանք է: Այս կապակցությամբ, Մարզպետը համայնքների ղեկավարներին առաջարկեց հետևողական աշխատանք տանել համայնքներում նմանօրինակ չափանիշների կիրառման ապահովման ուղղությամբ՝ ուշադրություն դարձնելով համայնքապետարանի սոցիալական աշխատողների աշխատանքներին:

Զեկույցների ավարտից հետո ներկայացվեցին հաղորդումները.

Հաղորդում 1. ՀՀ Շիրակի մարզում գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների ընթացքի մասին:

Ներկայացնող՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Շիրակի մարզային կենտրոնի պետի ժ/պ Արտուշ Հովհաննիսյան

Ներկայացված հաղորդման արդյունքում արձանագրվեց, որ Մարզում գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների աշխատանքներն իրականացված է շուրջ 50%-ով: Ըստ Արտուշ Հովհաննիսյանի՝ պատվաստումների ցածր ցուցանիշը պայմանավորված է գյուղատնտեսական կենդանիների սխալ հաշվառմամբ, ինչի հետ համակարծիք էր նաև Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետը: Իսկ ըստ Ախուրյան համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանի՝ պատվաստումների ցածր ցուցանիշը պայմանավորված է ոչ թե համայնքային անասնաբույժների կամ համայնքապետարանի աշխատանքով, այլ պատվաստումներ իրականացնող մասնագետների փոքր քանակով, որոնք անցել են ընդամենը մեկշաբաթյա դասընթաց, այլ մարզերից են ու չեն տիրապետում բնակավայրերի տեղանքին, չեն ճանաչում անասնատերերին և մշտապես կարիք ունեն համայնքապետարանի աշխատակիցների ուղեկցման: Ա. Իգիթյանն առաջարկեց քննարկել պատվաստումների գործընթացի իրականացումն ամբողջությամբ համայնքներին փոխանցելու հարցը, քանի որ բոլոր համայնքապետարաններում առկա են անասնաբույժների հաստիքներ, որոնք համալրված են: Լսելով ծավալված քննարկումը, գյուղատնտեսական կենդանիների պատվաստումների ցուցանիշն անբավարար գնահատելով՝ Մարզպետը Մարզպետի տեղակալ Ալբերտ Այվազյանին հանձնարարեց այցելել համայնքներ, տեղում ուսումնասիրել պատճառները և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

Հաղորդում 2. ՀՀ Շիրակի մարզի համայնքներում ՀՀ քաղաքաշինական նորմերի և կանոնների խախտմամբ իրականացված, ինչպես նաև ինքնակամ □ապօրինի□ շինարարական աշխատանքների հայտնաբերման վերաբերյալ:

Ներկայացնող՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Շիրակի տարածքային բաժնի պետ Տիգրան Ղազարյան

Ըստ հաղորդման՝ հայտնաբերված ինքնակամ շինությունների 70-80% դեպքերում շինարարության թույլտվությունները տրամադրվել են ձգձգումներով, այսինքն խնդիրը կայանում է նրանում, որ եղանակային պայմաններից ելնելով շինարարություն իրականացնողներն սկսում են աշխատանքների

իրականացումը՝ չսպասելով շինարարության թույլտվության տրամադրմանը: Տիգրան Ղազարյանն ընդգծեց, որ ՀՀ քաղաքաշինական նորմերի և կանոնների խախտմամբ իրականացված, ինչպես նաև ինքնակամ □ապօրինի□ շինարարական աշխատանքների հայտնաբերման գործընթացում հսկողությունն իրականացնում են համայնքների ղեկավարները իսկ տեսչական մարմինն իրականացնում է այդ գործընթացի վերահսկողությունը: Հայտնեց, որ անհրաժեշտ հսկողություն չիրականացվելու պարագայում համայնքների ղեկավարների նկատմամբ կհարուցվեն վարչական վարույթներ: Մարզպետը Մարզպետի տեղակալ Կարեն Մանուկյանին հանձնարարեց շրջայց կատարել համայնքներում, արձանագրել առկա խնդիրները և այդ մասին ներկայացնել տեղեկատվություն: Քննարկվեցին նաև սուբվենցիոն ծրագրերի շրջանակում շինարարության ավարտական ակտերի պատշաճ կազմմանը, կառուցված օբյեկտների հետագա պահպանմանը, հակակարկտային կայանները որպես արտադրական վտանգավոր օբյեկտներ գրանցելուն վերաբերող հարցեր:

Նիստի ավարտին Մարզպետն անդրադարձավ համայնքապետարաններից ստացվող գրություններին՝ համայնքների ղեկավարներին հորդորելով մշտապես ուշադրության կենտրոնում պահել գրությունների որակի ու ժամկետների պահպանման հարցերը: Միաժամանակ, առաջարկեց համայնքային ծառայության ու ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնների համալրման համար մրցույթների կազմակերպան գործընթացներն իրականացնել առաջնահերթ: Այնուհետև խոսքը փոխանցեց Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Արամ Անտոնյանին, ով տեղեկացրեց, որ 2021 թվականին միավորված համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար մրցույթների կազմակերպման գործընթացը մեկնարկել է: Ներկայում համայնքապետարանների հետ համագործակցված աշխատանք է տարվում՝ մրցույթների ժամանակացույցներ կազմելու ուղղությամբ և առաջիկայում բոլոր պաշտոնների համար կհայտարարվեն մրցույթները: Զուգահեռ նախատեսվում են նաև համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային գործընթացների կազմակերպումը:

ՀՀ Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը հայտարարեց ՀՀ Շիրակի մարզի խորհրդի նիստի ավարտի մասին:

Առդիր՝ չորս էլեկտրոնային նյութ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՆԱԶԵԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ ՏԻ և ՀԳՄՀ վարչություն